ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԻՋՈՑՆԵՐԻՑ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԱԿԻՑՆԵՐՆ ՈՒ ՆՈՐՄԱՏԻՎՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Նախագիծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

N o ----------

----------2022թ.

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԻՋՈՑՆԵՐԻՑ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԱԿԻՑՆԵՐՆ ՈՒ ՆՈՐՄԱՏԻՎՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմնք ընդունելով «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 26.12-րդ կետով ամրագրված դրույթները.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների պետական բյուջեի միջոցներից ֆինանսավորման գործակիցներն ու նորմատիվները՝ համաձայն հավելվածի։
2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում 2022 թվականի սեպտեմբերի 1-ից։

Հավելված N 1

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի

2020 թվականի –ի N -Ն հրամանի

ԳՈՐԾԱԿԻՑՆԵՐ ՈՒ ՆՈՐՄԱՏԻՎՆԵՐ

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԻՋՈՑՆԵՐԻՑ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ

1. Սույնով հաստատվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի ----------ի թիվ ------- -Ն որոշմամբ հաստատված «Պետական պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների՝ պետական բյուջեի միջոցներից ֆինանսավորման կարգը» կարգի 4-րդ կետում բերված բանաձևով հանրակրթական ուսումնական հաստատությունների (այսուհետև՝ հաստատություններ) պետական բյուջեի միջոցներից ֆինանսավորման գործակիցներն ու նորմատիվները։

2. Հաստատությունների պետական բյուջեի միջոցներից ֆինանսավորման գործակիցներն ու նորմատիվներ հետևյալն են.

ՈՒՆա-ն (ուսուցչական մեկ դրույքի համար սահմանված նվազագույն աշխատավարձի չափը) հավասար է 108,8 հազ. դրամի,

ԴՂլ-ն (դասղեկության համար նախատեսվող լրավճարը) որը հավասար է.

մինչև 18 աշակերտով կոմպլեկտավորված դասարանների դեպքում՝ ուսուցչական մեկ դրույքի համար սահմանված նվազագույն աշխատավարձի 10 տոկոսին,

18 և ավելի աշակերտով կոմպլեկտավորված դասարանների դեպքում՝ ուսուցչական մեկ դրույքի համար սահմանված նվազագույն աշխատավարձի 20 տոկոսին,

ՄՄգ-ն (մեթոդ միավորման ղեկավարին տրվող լրավճարը) հավասար է ուսուցչական մեկ դրույքի համար սահմանված նվազագույն աշխատավարձի տասը տոկոսին

մինչև 9 դասարանների տարեկան միջին թվի դեպքում՝ ոչ ավելի քան 4,

9-ից մինչև 18 դասարանների տարեկան միջին թվի դեպքում՝ ոչ ավելի քան 6,

18-ից ավելի դասարանների տարեկան միջին թվի դեպքում՝ ոչ ավելի քան 8 մեթդ միավորների հաշվարկով։

ՈՈՒԱա-ն **(**ոչ ուսուցչական անձնակազմի ամսական աշխատավարձի ֆոնդը) հաշվարկվում է.

ա. ընդհանուր ղեկավարման համար նախատեսվող հաստիքներ.

հհ	Հաստիքի անվանումը	Հաստիքի քանակը	Ամս աշխ
1.	Տնօրեն	1 հաստիքային միավոր՝ յուրաքանչյուր հաստատությանը	ՆԱԱ
2.	Տնօրենի ուսումնական աշխատանքի գծով տեղակալ	- 0,5 հաստիքային միավոր՝ մինչև 9 *(առանձին ավագ դպրոցների համար՝6)* դասարանների տարեկան միջին թվի դեպքում, - 0,75 հաստիքային միավոր՝ 9-ից *(առանձին ավագ դպրոցների համար՝6-ից)* մինչև 18 *(առանձին ավագ դպրոցների համար՝մինչև 12)* դասարանների տարեկան միջին թվի դեպքում, - 1 հաստիքային միավոր՝ 18-ից *(առանձին ավագ դպրոցների համար՝12-ից)* մինչև 36 դասարանների տարեկան միջին թվի դեպքում, - 1 հաստիքային միավոր՝ գիշերակացով և/կամ սնվող աշակերտների դեպքում, - 1,5 հաստիքային միավոր՝ 36 մինչև 54 դասարանների տարեկան միջին թվի դեպքում, - 2 հաստիքային միավոր՝ 54 և ավելի դասարանների տարեկան միջին թվի դեպքում	ՆԱԱ
	Տնօրենի մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալ	- 0,5 հաստիքային միավոր՝ մինչև 9 *(առանձին ավագ դպրոցների համար՝6)* դասարանների տարեկան միջին թվի դեպքում, - 0,75 հաստիքային միավոր՝ 9-ից *(առանձին ավագ դպրոցների համար՝6-ից)* մինչև 18 *(առանձին ավագ դպրոցների համար՝մինչև 12)* դասարանների տարեկան միջին թվի դեպքում - 1 հաստիքային միավոր՝ 18 *(առանձին ավագ դպրոցների համար՝12)* և ավելի դասարանների տարեկան միջին թվի դեպքում - 1 հաստիքային միավոր՝ գիշերակացով և/կամ սնվող աշակերտների առկայության դեպքում	

	Տնօրենի վարչատնտեսական աշխատանքների գծով տեղակալ	- 1 հաստիքային միավոր՝ 27 և ավելի դասարանների տարեկան միջին թվի, դեպքում, - 1 հաստիքային միավոր՝ գիշերակացով և/կամ սնվող աշակերտների առկայության դեպքում	
3.	նախնական զինվորական պատրաստության և անվտանգ կենսագործունեության ուսուցիչ (զինղեկ)	**Ավագ դպրոցներում՝** - 0,5 հաստիքային միավոր՝ մինչև 4 դասարանների տարեկան միջին թվի դեպքում, - 1 հաստիքային միավոր՝ 4 և ավելի դասարանների տարեկան միջին թվի դեպքում։ **Հիմնական դպրոցներում՝** - 0,5 հաստիքային միավոր՝ մինչև 6 դասարանների տարեկան միջին թվի դեպքում, - 1 հաստիքային միավոր՝ 6 և ավելի դասարանների տարեկան միջին թվի դեպքում։ **Միջնակարգ դպրոցներում՝** - 0,5 հաստիքային միավոր՝ մինչև 8 դասարանների տարեկան միջին թվի դեպքում, - 1 հաստիքային միավոր՝ 8 և ավելի դասարանների տարեկան միջին թվի դեպքում։	«Հա Հան հիմն միջն հան դպր վար կրթ միջի ուսո հաս սովո նախ պաս կան կետ

որտեղ ՆԱԱ-ն «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածով սահմանված Հայաստանի Հանրապետությունում նվազագույն ամսական աշխատավարձի չափն է։

Ընդ որում, 27-ից մինչև 36 դասարանների տարեկան միջին թվի դեպքում (առանձին ավագ դպրոցների համար՝ 18-ից մինչև 27 դասարանների տարեկան միջին թվի դեպքում, մասնագիտացված և հատուկ ուսումնական հաստատությունների դեպքում՝ 9-ից մինչև 18 դասարանների տարեկան միջին թվի դեպքում) տնօրենի աշխատավարձի նկատմամբ կիրառելի է 1,18 գործակիցը, փոխտնօրենների աշխատավարձի նկատմամբ՝ 1,12 գործակիցը,

36-ից մինչև 54 դասարանների տարեկան միջին թվի դեպքում (առանձին ավագ դպրոցների համար՝ 27-ից մինչև 36 դասարանների տարեկան միջին թվի դեպքում, մասնագիտացված և հատուկ ուսումնական հաստատությունների դեպքում՝ 18-ից մինչև 27 դասարանների տարեկան միջին թվի դեպքում) տնօրենի աշխատավարձի նկատմամբ կիրառելի է 1,32 գործակիցը, փոխտնօրենների աշխատավարձի նկատմամբ՝ 1,21 գործակիցը,

54 և ավելի դասարանների տարեկան միջին թվի դեպքում (առանձին ավագ

դպրոցների համար՝ 36 և ավելի դասարանների տարեկան միջին թվի դեպքում, մասնագիտացված և հատուկ ուսումնական հաստատությունների դեպքում՝ 27 և ավելի դասարանների տարեկան միջին թվի դեպքում) տնօրենի աշխատավարձի նկատմամբ կիրառելի է 1,42 գործակիցը, փոխտնօրենների աշխատավարձի նկատմամբ՝ 1,3 գործակիցը,

մասնագիտացված և հատուկ ուսումնական հաստատությունների դեպքում՝ նաև 1,27 գործակիցը, իսկ առանձին ավագ դպրոցների համար՝ նաև 1,2 գործակիցը։

Քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակների հետ կապված աշխատանքների կատարումն իրականացվում է նախնական զինվորական պատրաստության և անվտանգ կենսագործունեության ուսուցչի (զինղեկի) կողմից, իսկ վերջինիս բացակայության դեպքում՝ տնօրենի հրամանով պարտականությունների կատարումը կարող է դրվել տնօրենի տեղակալ(ներ)ի կամ որևէ այլ աշխատողի վրա։

բ. հաստատության հաշվապահական հաշվառման և ֆինանսատնտեսական գործունեության համար նախատեսվող հաստիքներ.

հհ	Հաստիքի անվանումը	Հաստիքի քանակը
1.	գլխավոր հաշվապահ	- 0,5 հաստիքային միավոր՝ մինչև 9 դասարանների տարեկան միջին թվի դեպքում (ևս 0,5 հասիք՝ գիշերակացով աշակերտների առկայության դեպքում - 1 հաստիքային միավոր՝ 9 և ավելի դասարանների տարեկան միջին թվի դեպքում
2.	տնտեսվար	- 0,5 հաստիքային միավոր՝ վարչատնտեսական աշխատանքների գծով տնօրենի տեղակալի բացակայության դեպքում - 1 հաստիքային միավոր՝ գիշերակացով աշակերտնե առկայության դեպքում
3.	հաշվապահ	- 0,5 հաստիքային միավոր՝ 18-ից մինչև 27 դասարանների տարեկան միջին թվի դեպքում, ինչպե նաև գիշերակացով և/կամ սնվող աշակերտների առկայության դեպքում 9-ից մինչև 18 դասարանների տարեկան միջին թվի դեպքում, - 0.75 հաստիքային միավոր՝ 27 մինչև 36 դասարանների տարեկան միջին թվի դեպքում, - 1 հաստիքային միավոր՝ 36 և ավելի դասարանների տարեկան միջին թվի դեպքում, ինչպես նաև գիշերակացով և/կամ սնվող աշակերտն առկայության դեպքում 18 և ավելի դասարանների տարեկան միջին թվի դեպքում
4.	գնումների համակարգող	- 0,5 հաստիքային միավոր՝ 27-ից մինչև 36

		դասարանների տարեկան միջին թվի դեպքում, - 1 հաստիքային միավոր՝ 36 և ավելի դասարանների տարեկան միջին թվի դեպքում, - 1 հաստիքային միավոր՝ գիշերակացով և/կամ սնվո աշակերտների առկայության դեպքում
5.	տնտեսագետ	- 1 հաստիքային միավոր՝ 54 և ավելի դասարանների տարեկան միջին թվի դեպքում

Ընդ որում, 27 և ավելի դասարանների տարեկան միջին թվի դեպքում գլխավոր հաշվապահի աշխատավարձի նկատմամբ կիրառելի է 1,18 գործակիցը, 36 և ավելի դասարանների տարեկան միջին թվի դեպքում՝ 1,32 գործակիցը, 54 և ավելի դասարանների տարեկան միջին թվի դեպքում՝ 1,42 գործակիցը, մասնագիտացված և հատուկ ուսումնական հաստատությունների դեպքում՝ նաև 1,27 գործակիցը, իսկ առանձին ավագ դպրոցների համար՝ 1,2 գործակիցը։

Գնումների համակարգողի հաստիքի բացայակության դեպքում վերջինիս կողմից իրականացվող աշխատանքները տնօրենի հրամանով կարող են դրվել տնտեսագետի, հաշվապահի կամ որևէ այլ աշխատողի վրա, որոնք պետք է ունենան գնումների համակարգողի որակավորում։ Այդ դեպքում տվյալ աշխատակցին կարող է տրվել լրավճար, որը հավասար է գնումների համակարգողի համար նախատեսված ամսական աշխատավարձի 30 տոկոսին։

Տնտեսապես արդյունավետ լինելու պարագայում հաստատությունը կարող է նաև չունենալ Գնումների համակարգողի հաստիք և ձեռք բերել գնումների կազմակերպման ծառայություն։

գ. հաստատությունում կադրային գործի իրականացման, գործավարության և փաստաթղթաշրջանառության աշխատանքների համար նախատեսվող հաստիքներ.

հհ	Հաստիքի անվանումը	Հաստիքի քանակը
1.	Տեսուչ՝ կադրերի գծով և/կամ Գործավար	- 0,5 հաստիքային միավոր՝ մինչև 9 դասարանների տարեկ միջին թվի դեպքում */մասնագիտացված և հատուկ դպրոցնե դեպքում՝ 0,5 հաստիքով ավելի/*, - 1 հաստիքային միավոր՝ 9-ից մինչև 18 դասարանների տարեկան միջին թվի դեպքում */մասնագիտացված և հատու դպրոցների դեպքում՝ 0,5 հաստիքով ավելի/*, - 1,5 հաստիքային միավոր՝ 18–ից մինչև 36 դասարանների տարեկան միջին թվի դեպքում */մասնագիտացված և հատու դպրոցների դեպքում՝ 0,5 հաստիքով ավելի/*, - 2 հաստիքային միավոր՝ 36 և ավելի դասարանների տարեկան միջին թվի դեպքում

2.	Համակարգչային օպերատոր	- 0,5 հաստիքային միավոր՝ մինչև 9 դասարանների տարեկ միջին թվի դեպքում, - 1 հաստիքային միավոր՝ 9-ից մինչև 36 դասարանների տարեկան միջին թվի դեպքում, - 1,5 հաստիքային միավոր՝ 36 և ավելի դասարանների տարեկան միջին թվի դեպքում

Ընդ որում, գործավարի կամ կադրերի գծով տեսուչի պարտականությունները կարող են դրվել համապատասխանաբար կադրերի գծով տեսուչի կամ գործավարի վրա։

դ. հաստատությունում լաբորատորիաների և խբակների կազմակերպման, մանկավարժահոգեբանական աջակցության և բժշկական օգնության տրամադրման աշխատանքների իրականացման համար նախատեսվող հաստիքներ.

հհ	Հաստիքի անվանումը	Հաստիքի քանակը
1.	Ուսուցչի օգնական (բացառությամբ հատուկ դպրոցների)	ուսումնական հաստատության տարեկան թվի 10 տոկոսի հաշ սահմանվում է 1 ուսուցչի օգնա դպրոցում երեխաների թիվը 7 ն դեպքում հաշվարկվում է 0,5 դր յուրաքանչյուր մինչև 7 երեխայ 0,5 դրույք։ հաստիքային միավորների քան դասարանների թվի և 13-ի քան կլորացման մինչև 1 տասնորդա 0,5 հաստիքային միավորը
2.	Լաբորանտ */յուրաքանչյուր կահավորված և գործող լաբորատորիայի դեպքում/*	- 0,5 հաստիքային միավոր՝ տվ օգտվող մինչև 6 դասարաններ դեպքում, - 1 հաստիքային միավոր՝ տվյա և ավելի դասարանների տարեկ
3.	Դաստեարակչական աշխատանքների կազմակերպիչ	- 0,5 հաստիքային միավոր՝ մին տարեկան միջին թվի դեպքում, - 0,75 հաստիքային միավոր՝ 9- տարեկան միջին թվի դեպքում, - 1 հաստիքային միավոր՝ 18-ից տարեկան միջին թվի դեպքում

4.	Գրադարանավար	- 1,5 հաստիքային միավոր՝ 36 տարեկան միջին թվի դեպքում - 0,5 հաստիքային միավոր՝ մի տարեկան միջին թվի դեպքում *աշակերտների առկայության ա* *հատուկ դպրոցների դեպքում՝* 0 - 1 հաստիքային միավոր՝ 9-ից տարեկան միջին թվի դեպքում *աշակերտների առկայության ա* *հատուկ դպրոցների դեպքում՝* 0
5.	Բժիշկ */հատուկ և մասնագիտացված դպրոցների դեպքում/*	- 1,5 հաստիքային միավոր՝ 27 տարեկան միջին թվի դեպքում - 0,5 հաստիքային միավոր՝ մի տարեկան միջին թվի դեպքում, - 1 հաստիքային միավոր՝ 9-ից տարեկան միջին թվի դեպքում
6.	Բժիշկ */հատուկ դպրոցների դեպքում/*	Ըստ պրոֆիլի՝ համապատասխ առկայության դեպքում
7.	Բուժքույր */հատուկ և մասնագիտացված դպրոցների դեպքում/*	- 4 հաստիքային միավոր - մարզական դպրոցների դեպք օգտագործվող մարզադահլիճն մեկով պակաս թվով
8.	Հոգեբան	- 0,5 հաստիքային միավոր՝ մի տարեկան միջին թվի դեպքում, - 0,75 հաստիքային միավոր՝ 9- տարեկան միջին թվի դեպքում, - 1,0 հաստիքային միավոր՝ 18- տարեկան միջին թվի դեպքում, - 1,5 հաստիքային միավոր՝ 36 տարեկան միջին թվի դեպքում
9.	Հոգեբան, Հատուկ մանկավարժ, Սոցիալական մանկավարժ *(լոգոպեդ, տիֆլոմանկավարժ, սուրդոմանկավարժ, օլիգոֆրենամանկավարժ, էրգոթերապիստ և այլ՝ ըստ ուղվածության)*	- հատուկ դպրոցների դեպքում կարիքի՝ համապատասխան հի մարմնի թույլտվության պարա
10.	Դաստիարակ	- 1 հաստիքային միավոր՝ յուրա

	/սննդով և/կամ գիշերակացով սաներ ունեցող հաստատությունների համար/	հաշվարկով
11.	Գիշերային դայակ կամ գիշերային դաստիարակ	- 4 հաստիքային միավոր՝ մինչև գիշերակացով սանի համար
12.	Հրահանգիչ-մեթոդիստ */մասնագիտացված մարզական դպրոցների դեպքում/*	- 1 հաստիքային միավոր՝ յուրա հաշվարկով
13.	Խմբակավար */հատուկ և մասնագիտացված դպրոցների դեպքում/*	- 1 հաստիքային միավոր՝ յուրա հաշվարկով */լիազոր մարմնի հ ձևավորման կարգին համապա*
14.	Այլ հաստիքներ */հատուկ դպրոցների դեպքում/*	Ըստ պրոֆիլի՝ համապատասխ առկայության դեպքում

ե. հաստատությունում նյութատեխնիկական միջոցների շրջանառության, տրանսպորտային և բեռնման-բեռնաթափման աշխատանքների համար համար նախատեսվող հաստիքներ.

հհ	Հաստիքի անվանումը	Հաստիքի քանակը
1.	Պահեստապետ */սննդով և/կամ գիշերակացով սաներ ունեցող հաստատությունների համար/*	- 0,5 հաստիքային միավոր՝ մինչև 9 դասարանների տարեկան միջին թվի դեպքում, - 0,75 հաստիքային միավոր՝ 9-ից մինչև 18 դասարանների տարեկան միջին թվի դեպքում, - 1 հաստիքային միավոր՝ 18 և ավելի դասարանն տարեկան միջին թվի դեպքում
2.	Վարորդ */ավտոմեքենայի առկայության դեպքում/*	- 1 հաստիքային միավոր՝ մեկ տրանսպորտային միջոցի հաշվարկով, - հատուկ և մասնագիտացված դպրոցների դեպքու առկա ավտոմեքենաների քանակով, բայց ոչ ավելի քան 2 հաստիքային միավոր
3.	Տնտեսուհի կամ տնտեսվար */սննդով և/կամ գիշերակացով սաներ ունեցող հաստատությունների համար/*	- 1 հաստիքային միավոր՝ մինչև 100 գիշերակացով սովորողի դեպքում, - 2 հաստիքային միավոր՝ 100-300 գիշերակացով սովորողի դեպքում, - 3 հաստիքային միավոր՝ 301 և ավելի գիշերակաց սովորողի դեպքում

զ. հաստատությունում շենքերի և սարքավորումների սպասարկման ու նորոգման աշխատանքների համար նախատեսվող հաստիքներ.

հհ	Հաստիքի անվանումը	Հաստիքի քանակը
1.	Պարետ	- 1 հաստիքային միավոր՝ յո ննջասենյակային մասնաշեն
2.	Ընթացիկ նորոգող և սպասարկող մասնագետներ */էլեկտրագետ, սանտեխնիկ, փականագործ/*	- 0,5 հաստիքային միավոր՝ տարեկան միջին թվի դեպքո *աշակերտների առկայությա* *հատուկ դպրոցների դեպքու* - 0,75 հաստիքային միավոր՝ դասարանների տարեկան մ */գիշերակացով աշակերտնե* *մասնագիտացված և հատու* *հաստիքով ավելի/,* - 1 հաստիքային միավոր՝ 18 տարեկան միջին թվի դեպքո *աշակերտների առկայությա* *հատուկ դպրոցների դեպքու* - 1,5 հաստիքային միավոր՝ դասարանների տարեկան մ /գիշերակացով աշակերտնե մասնագիտացված *և հատու* *հաստիքով ավելի/,* - 2 հաստիքային միավոր՝ 36 տարեկան միջին թվի դեպքո *աշակերտների առկայությա* *հատուկ դպրոցների դեպքու* - 2,5 հաստիքային միավոր՝ տարեկան միջին թվի դեպքո *աշակերտների առկայությա* *հատուկ դպրոցների դեպքու*
3.	Երաժշտական գործիքների նորոգող և/կամ լարող	Ըստ պրոֆիլի՝ համապատա առկայության դեպքում
4.	Հնոցապան */կաթսայատան առկայության դեպքում/*	- ջեռուցման ժամանակաշրջ հերթափոխի հաշվարկի, - գիշերակացով երեխաների դեպքում՝ նաև 1 հաստիքայի
5.	Մասնագետ՝ ջեռուցման համակարգի սպասարկման */ջեռուցումն ավտոնոմ համակարգով իրականացնելու*	- ջեռուցման ժամանակաշրջ միավոր՝ յուրաքանչյուր կազ

դեպքում/

Է. հաստատությունում շենքերի և հարակից տարածքների պահպանման, խնամքի և կենցաղային սպասարկման աշխատանքների համար նախատեսվող հաստիքներ.

հհ	Հաստիքի անվանումը	Հաստիքի քանակը
1.	Պահակ	- 4 հաստիքային միավոր
2.	Այգեպան */բացառությամբ ծմեռային ժամանակաշրջանի/*	- 0.5 հաստիքային միավոր՝ 800 բարեկարգվող այգու առկայութ - 1 հաստիքային միավոր՝ 2000 բարեկարգվող այգու դեպքում
3.	Հավաքարար	- 1 հաստիքային միավոր՝ շենք- յուրաքանչյուր մաքրվող մինչև որում, երկհերթ ուսուցում կազ աշակերտների առկալությամբ կիրառվում է 1,5 գործակիցը /, - ևս 1 հաստիքային միավոր՝ բ 2000 քառ.մ-ի մաքրման համար հաստիքային միավոր
4.	Սպասարկող վերելակի */շահագործվող վերելակի առկայության դեպքում/*	- 0.5 հաստիքային միավոր՝ յուր
5.	Լվացող-արդուկող */լվացքատան առկայության դեպքում/*	- 1 հաստիքային միավոր՝ մինչ միջին թվի դեպքում, - 1,5 հաստիքային միավոր՝ 9-ի տարեկան միջին թվի դեպքում, - 2 հաստիքային միավոր՝ 27 և միջին թվի դեպքում
6.	Դերձակ /կոշկակար */մարզառազմական ուղղվածությամբ մասնագիտացված դպրոցների դեպքում/*	- 0,5 հաստիքային միավոր՝ մի միջին թվի դեպքում, - 1 հաստիքային միավոր՝ 9 և միջին թվի դեպքում

Ը. Մասնագիտացված և հատուկ դպրոցներում սննդի տրամադրման աշխատանքների համար նախատեսվող հաստիքներ.

հհ	Հաստիքի անվանումը	Հաստիքի քանակը
1.	Ավագ խոհարար */սննդով սաներ ունեցող հաստատությունների համար/*	- 1 հաստիքային միավոր՝ յուրաքա

2.	Խոհարար */սննդով սաներ ունեցող հաստատությունների համար/*	- 1 հաստիքային միավոր՝ մինչև 9 թվի դեպքում, - 1,5 հաստիքային միավոր՝ 9-ից մ տարեկան միջին թվի դեպքում, - 2 հաստիքային միավոր՝ 27 և ավ միջին թվի դեպքում */գիշերակացով աշակերտների առ հաստիքով ավելի/*
3.	Խոհանոցի աշխատող */սննդով սաներ ունեցող հաստատությունների համար/*	- 1,5 հաստիքային միավոր՝ մինչև միջին թվի դեպքում, - 2 հաստիքային միավոր՝ 9-ից մին միջին թվի դեպքում, - 2,5 հաստիքային միավոր՝ 27 և ա միջին թվի դեպքում */գիշերակացով աշակերտների առ հաստիքով ավելի/*

ԲԼԼ-ի (բարձրլեռնային բնակավայրերի շարքում դասվող բնակավայրերում տեղակայված պետական ուսումնական հաստատությունների աշխատողներին բարձրլեռնային վայրերում աշխատելու համար տրվող լրավճարի) չափը որոշվում է տվյալ հաստատության աշխատակիցների թվի (ուսուցչական դրույքների, մանկավարժական և վարչական հաստիքների թվի հանրագումարի) միջին տարեկան թվի, Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանած պետական մարմին չհամարվող պետական բյուջետային հիմնարկների աշխատողներին բարձրլեռնային վայրերում աշխատելու համար տրվող լրավճարի (աշխատաժամանակի նորմալ կամ կրճատ տևողության դեպքում) չափի և 12 թվի արտադրյալին,

Սգ-ն սննդի գումարն է, որը հաշվարկվում է Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի հրամանով հաստատված Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի «Հանրակրթություն» ծրագրի «Տարրական ընդհանուր հանրակրթություն» և «Նախադպրոցական կրթություն» միջոցառումների շրջանակում սովորողներին սննդի կազմակերպման նպատակով տրամադրվող ֆինանսական միջոցների հաշվարկման նորմատիվներին և Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի «Հանրակրթության ծրագրի» միջոցառումների շրջանակում հատուկ, մասնագիտացված և արտադպրոցական կրթություն իրականացնող ուսումնական հաստատություններում սովորողների սննդի կազմակերպման նպատակով տրամադրվող ֆինանսական միջոցների հաշվարկման նորմատիվներին համապատասխան,

Դգ-ն դասագրքերի ներդրումային գումարների փոխհատուցման չափն է, որը հաշվարկվում է ըստ ընտանեկան նպաստի համակարգում ընդգրկված ընտանիքների սովորողների /5-րդ և ավելի դասարանների սովորողներ/ և

տվյալ դասարանի դասագրքերի փաթեթի համար սահմանված վարձավճարի գումարի արտադրյալի՝ բացառությամբ այլ ծրագրերով դասագրքերով ապահովվող դպրոցների,

ՀԴԾ-ն համադպրոցական ծախսն է, որը ներառում է հաստատության պահպանման ծախսերը, այդ թվում՝

էլեկտրոմատակարարման ծախսերը, որը որոշվում է վերջին երեք տարվա փաստացի ծախսերի միջինով /հաշվի առնելով սակագնային փոփոխությունները/,

բնական գազի մատակարարման և սպասարկման ծախսերը, որը որոշվում է վերջին երեք տարվա փաստացի ծախսերի միջինով /հաշվի առնելով սակագնային փոփոխությունները/,

այլ տիպի ջեռուցման ծախսերը, որը որոշվում է վերջին երեք տարվա փաստացի ծախսերի միջինով, ընդ որում, ջեռուցման մի տեսակից մյուսին անցնելիս հիմք է ընդունվում համանման ջեռուցման համակարգ և ծավալներ ունեցող հաստատության տվյալ տեսակի ծախսերը,

ջրամատակարարման և ջրահեռացման ծախսերը, որը որոշվում է վերջին երեք տարվա փաստացի ծախսերի միջինով /հաշվի առնելով սակագնային փոփոխությունները/,

աղբահանման ծախսերը, որը հավասար է Աղբահանության և սանիտարական մաքրման մասին Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով կրթական և ուսումնական նշանակության շենքերի և շինությունների աղբահանության վճարի տարեկան չափին,

ներքին գործուղումների և ծառայողական ուղևորությունների ծախսերը, որը հաշվարկվում է.

մինչև 9 դասարան ունեցող (բացառությամբ Երևան քաղաքում գտնվող) հաստատությունների համար՝ տարեկան 83,2 հազ. դրամ,

9 և ավելի, սակայն 27-ից պակաս դասարան ունեցող (բացառությամբ Երևան քաղաքում գտնվող) հաստատությունների համար՝ տարեկան 124,8 հազ. դրամ,

27 և ավելի, սակայն 54-ից պակաս դասարան ունեցող (բացառությամբ Երևան քաղաքում գտնվող) հաստատությունների համար՝ տարեկան 156,0 հազ. դրամ,

54 և ավելի դասարան ունեցող (բացառությամբ Երևան քաղաքում գտնվող) հաստատությունների համար՝ տարեկան 197,6 հազ. դրամ,

Ընդ որում, առանձին ավագ դպրոցների, ինչպես նաև մասնագիտացված և հատուկ դպրոցների համար կիրառելի է 1,2 գործակիցը, Երևան քաղաքից դուրս մասնաճյուղեր ունեցող հաստատությունների համար՝ նաև 1,3 գործակիցը։

կապի ծառայությունների ծախսերը, որը հաշվարկվում է հետևյալ աղյուսակով.

Դասարանների միջին տարեկան թիվը	հասանելիք ֆիքսված հեռախոսակապի թիվը	ամսական բաժանորդավճարը /դրամ/	միջքաղաքային և դեպի բ ցանց ելից հեռախոսային խոսակցությունների ամս սահմանաչափը* /դրամ/
մինչև 9	1	4800	2000
9 և ավելի, սակայն 36-ից պակաս	2	4800	2000
36 և ավելի	3	4800	4000

* *միջքաղաքային և դեպի բջջային ցանց ելից հեռախոսային խոսակցությունների սահմանաչափը կախված չէ ֆիքսված հեռախոսակապի թվից*

Ընդ որում, գիշերակացով աշակերտների առկայությամբ դպրոցների համար կիրառելի է 1,3 գործակիցը։

այլ կոմունալ ծախսերը, որը որոշվում է դասարանների տարեկան միջին թիվը բազմապատկելով **5730**-ի, ընդ որում, առանձին ավագ դպրոցների համար կիրառելի է 1,2 գործակիցը, մասնագիտացված դպրոցների համար՝ 1,35 գործակիցը, հատուկ դպրոցների համար՝ 1,5 գործակիցը։

գրասենյակային ապրանքների և նյութերի, տնտեսական ապրանքների և նյութերի համար նախատեսված ծախսերը, որը որոշվում է դասարանների տարեկան միջին թիվը բազմապատկելով **13740**-ի, ընդ որում, առանձին ավագ դպրոցների համար կիրառելի է 1,2 գործակիցը, մասնագիտացված դպրոցների համար՝ 1,55 գործակիցը, հատուկ դպրոցների համար՝ 1,95 գործակիցը,

լաբարատորիաների ապրանքների և նյութերի համար նախատեսված ծախսերը, որը որոշվում է գործող լաբարատորիաներից օգտվող դասարանների թվով՝ ըստ դասարանների տարեկան միջին թվի, հետևյալ սանդղակով.

լաբորատորիան	դասարանը	նյութածախսի տարեկան գումարը՝ ՀՀ դրամ
բնագիտություն	5	3,500
	6	3,500
կենսաբանություն	7	7,500
	8	8,000
	9	9,500
	10	13,000
	11	9,500
	12	7,500
քիմիա	7	3,260
	8	3,260

	9	3,260
	10	3,260
	11	24,000
	12	7,100
Ֆիզիկա	7	350
	8	350
	9	350
	10	700
	11	1,000
	12	400

հաշմանդամություն ունեցող երեխաների համար ֆիզիկական միջավայրի հարմարեցումների համար նախատեսված ծախսերը, որը հաշվարկվում է երեք տարվա կտրվածքով 3300 հազ. դրամ (յուրաքնչուր տարի 1100 հազ. դրամ) և տրվում է այն ուսումնական հաստատություններին, որոնք համրարեցված չեն ներառական կրթությանը կամ ընդգրկված չեն այդ նպատակով ֆինանսավորվող ծրագրերում, ինչպես նաև առաջիկա երեք տարիների ընթացքում չի նախատեսվում դպրոցին ամրացված անշարժ գույքի հիմնանորոգում: Տվյալ ծախսի նպատակահարմարությունը որոշում է դպրոցի կառավարումն իրականացնող լիազոր մարմինը՝ հաշվի առնելով նաև այն, որ առաջիկա երեք տարիներին յուրաքանչյուր տարի հաշմանդամություն ունեցող երեխաների համար ֆիզիկական միջավայրի հարմարեցումներ պետք է իրականացվեն դպրոցի կառավարումն իրականացնող լիազոր մարմի ենթակայությամբ գործող դպրոցների թվի առնազն 1/3-ում,

կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար անհրաժեշտ խելամիտ կամ այլ անհատական հարմարեցումների համար նախատեսված շարունակական շարունակական ծախսերը, որը հաշվարկվում է ներառական համրարեցման համար նախատեսված ծախսերի 10 տոկոսի չափով, ընդ որում, հաշվարկվում է այն դպրոցների համար, որոնք արդեն իսկ համրարեցված են ներառական կրթությանը,

տրանսպորտային նյութերի համար նախատեսված ծախսերը, որը հաշվարկվում է յուրաքանչյուր առկա տրանսպորտային միջոցի հաշվարկով առավելագույնը 177800 դրամ, սակայն որ ավելի, քան 1 տրանսպորտային միջոց, բացառությամբ հատուկ և մասնագիտացված ուսումնական հաստատությունների, որոնց տրանսպորտային միջոցների քանակը (ըստ հիմնավորման) ենթակա է համաձայնեցման դպրոցի կառավարումն իրականացնող լիազոր մարմի հետ,

համազգեստի համար նախատեսված ծախսերը /մարզառազմական ուղղվածությամբ մասնագիտացված դպրոցների դեպքում/, որը որոշվում է համազգեստի 1 համակազմի վերջին տարվա փաստացի ձեռքբերման գնի /ավելացված առնելով 5 տոկոսի չափով/ և տարեկան սովորողների տարեկան միջին թվի արտադրյալով,

այլ ծախսերը, որը որոշվում է դասարանների տարեկան միջին թիվը

բազմապատկելով **185900**-ի, ընդ որում, առանձին ավագ դպրոցների համար կիրառելի է 1,2 գործակիցը, մասնագիտացված դպրոցների համար՝ 1,35 գործակիցը, հատուկ դպրոցների համար՝ 1,5 գործակիցը։

3. Սահմանել, որ.

3.1. մասնաճյուղեր ունեցող հաստատությունների մասնաճյուղերի համար հաշվարկը կատարվում է որպես առանձին հաստատություն։ Այդ դեպքում հաստատության հաշվապահական հաշվառման և ֆինանսատնտեսական գործունեության համար հաստիքներ չեն նախատեսվում։

3.2. հաստատության տնօրենները հաստատությունների տարեկան ծախսերի նախահաշիվները և հաստիքացուցակները կազմելիս պետք է առաջնորդվեն սույն ֆինանսավորման գործակիցներով և նորմատիվներով /պետական բյուջեի միջոցների մասով/՝ նկատի ունենալով, որ

թույլատրվում է անհրաժեշտ հիմնավորումների առկայության դեպքում հաստիքացուցակներում թույլ տալ շեղումներ՝ չգերազանցելով ոչ ուսուցչական անձնակազմի ամսական աշխատավարձի ֆոնդի համար սույն կարգով հաշվարկված գումարի մեծությունը,

տնտեսապես արդյունավետ լինելու դեպքում հաստատությունները կարող են տվյալ ծախատեսակի համար հաշվարկված ֆինանսական միջոցների սահմաններում ձեռք բերել ծառայություններ և աշխատանքներ՝ առնվազն պահպանելով քանակական և որակական ցուցանիշները,

3.3. հաստատության տարեկան ծախսերի նախահաշիվների և/կամ հաստիքացուցակների շեղումները 3.2. կետից տարբերվելու դեպքում որոշումը ընդունում է տվյալ հաստատության լիազոր կառավարման մարմնի ղեկավարը,

3.4 **ԲԼ**-ն (բարձրլեռնային բնակավայրերի շարքում դասվող բնակավայրերում տեղակայված պետական ուսումնական հաստատությունների աշխատողներին բարձրլեռնային վայրերում աշխատելու համար տրվող լրավճարը, **Սգ**-ն սննդի գումարը, **Դգ-**ն դասագրքերի ներդրումային գումարները, **Դծ-**ում (համադպրոցական ծախսերում) ներառված լաբարատորիաների ապրանքների և նյութերի համար նախատեսված ծախսերը, հաշմանդամություն ունեցող երեխաների համար ֆիզիկական միջավայրի հարմարեցումների համար նախատեսված ծախսերը, ինչպես նաև կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար անհրաժեշտ խելամիտ կամ այլ անհատական հարմարեցումների համար նախատեսված շարունակական շարունակական ծախսերը բացառապես պետք է օգտագործվեն այդ նպատակներով։